ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔ-ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառավարման ոլորտի վրա իրվական ակտի նախագծի ազդեցության վերաբերյալ

«Հայաստանի համայնքների միության» Հանրապետական խորհրդի 2020թ. հունվարի 11-ի նիստում

Իրավական ակտի նախագծի անունը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է կատարել փոփոխություն օրենքի հավելված N 1-ի 2.4-րդ կետի 23-րդ ենթակետում, որով սահմանվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար բազմաբնակավայր համայնքի անվանումը և դրանում ընդգրկված բնակավայրերի անվանումները: Գործող կարգավորման համաձայն, Գեղամասար համայնքի կենտրոն է համարվում Սոթք գյուղը, նախագծով նախատեսվում է փոփոխել այն և որպես համայնքի կենտրոն սահմանել Գեղամասար գյուղը: Ըստ Նախագծին կից ներկայացված հիմնավորման, այդ փոփոխությունը պայմանավորված է վերջին երկու տարվա ընթացքում համայնքի բնակչության և ՏԻՄ-երից ստացված բազմաթիվ դիմումները վերլուծելու և արդյունքում համայնքային կենտրոնը Գեղամասար բնակավայր տեղափոխելու

հարցին ընդառաջելու հանգամանքով: Սակայն, նշված հանգամանքի մեջբերումը ըստ էության առավելապես չի հիմնավորում օրենսդրական փոփոխության նպատակահարմարությունը: Մասնավորապես՝ հիմնավորմամբ ներկայացված չէ նույն համայնքի կազմում ընդգրկված Սոթք և Գեղամասար բնակավայրերի ենթակառուցվածքային հնարավորությունների, դրանց տարբերությունների, աշխարհագրական դիրքերի վերաբերյալ տեղեկատվություններ, որոնք թույլ կտային համոզիչ և սպառիչ պատասխան տալ օրենսդրական նման փոփոխությանը: Կարծում ենք, որ նման փոփոխության իրականացումը պահանջում է լրացուցիչ իրավական և ինչու չէ, նաև տնտեսական արդյունավետությունից բխող հիմնավորման ներկայացում:

Միաժամանակ Նախագծով նախատեսվում է ձևավորվել հետևյալ համայնքային փնջերը.

- ✓ ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո՝ Լերմոնտովո, Անտառաշեն **(թվով 2)**,
- ✓ ՀՀ Կոտայքի մարզի Քասախ՝ Քասախ, Պռոշյան **(թվով 2),**
- ✓ ՀՀ Տավուշի մարզի Իջևան՝ Իջևան, Ազատամուտ, Ակնաղբյուր, Աճարկուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Բերքաբեր, Գանձաքար, Գետահովիտ, Դիտավան, Ենոքավան, Լուսահովիտ, Լուսաձոր, Խաշթառակ, Ծաղկավան (Իջևանի շրջ.), Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Վազաշեն **(թվով 19):**

Այսպիսով, Նախագծով նախատեսվում է թվով 23 համայնք միավորել նոր ձևավորվող 3 համայնքի կազմում: Ըստ էության Նախագծի ընդունման պարագայում ՀՀ Տավուշի մարզում համայնքների միավորման գործընթացը կավարտվի: Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ (բացառությամբ՝ Քասախի և Պռոշյանի) կազմակերպվել են քննարկումներ, որոնց արդյունքներով մշակվել է Նախագիծը: Փաստորեն, ստացվում է այնպես, որ Նախագիծը մշակող մարմինը հիմնավորմամբ ներկայացնում է Նախագիծը թերի ձևով հանրայնացնելու և բնակչության կարծիքը չլսելու վերաբերյալ փաստը, որն ըստ էության ոչ միայն իրավաչափ գործողություն չէ, այլև դուրս է օրենսդրական կարգավորումներից բխող ողջամտության շրջանակներից:

Նախագծի հիմնավորումներում որևէ կերպ արձանագրված չէ Պռոշյան և Քասախ համայնքների միավորման հիմնավորման անրաժեշտությունը և լիազոր մարմինը հիմնավորման մեջ որպես բացթողում գրել է դրա մասին: E-draft-ում դրված նախագծում նշված է, որ այս երկու բնակավայրերում հանրային քննարկումներ չեն եղել: Եվ դա գրվել է, բայց հետևանքի մասին չի գրվել: Եթե արձանագրվում է, որ քննարկում անգամ չի արել,

այստեղ առաջ է գալիս այն խնդիրը, որ բնակչության կարծիքը լսելու կարգավորումը չի իրացվել: Հետևաբար կարծում ենք, որ ոչ միայն այս հիմնավորվմամբ, այլ ընդհանրապես և Իջևանում և Գեղամասարում այս նախագծի վերաբերյալ պատշաճ կարծիք լսելու վերաբերյալ գործողություններ չեն կատարվել: Ընդամնեը այդ երկու համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերում կազմակերպվել են քննարկումներ, բայց ոչ բոլորում: Հետևաբար, կարծում ենք՝ նախագիծը թերի է և չի համապատսխանում Սահմանադրության 190-րդ հոդվածին, և քանի որ ԱԺ-ն այս պահին կանոնակարգ սահմանադրական օրենքով չունի լիազորություներ հստակ լիազորություններ լսելու համայնքի կարծիքը և չի էլ կարող լսել, քանի որ ԱԺ լիազորությունները սահմանափակվում են բացառությամբ Սահմանադրությամբ և կանոնակարգ օրենքով, իսկ կանոնակարգ օրենքը պատշաճ չի նկարագրում, թե ինչպես պետք է լսի համայնքի կարծիքը:

Հիմնական եզրակացություն

Ընդունելով ՀՀ կառավարության բացառիկ իրավասությունը վարչատարածքային փոփոխությունների իրականացման հարցում՝ նախագիծը գնահատում ենք թերի է այն առումով, որ չի ապահովում ՀՀ Սահմանադրության և Տեղական ինքնակառավարման եվրոպական Խարտիայի պահանջը՝ համայնքների՝ լսված լինելու իրավունքը և առանձին համայնքների դեպքում բավարար հանրային լսումներ չեն իրականցվել: